ՈՒ Ղ Ե Ր Ձ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

- ***բացառում է*** ապրանքային շուկայում կամ տնտեսական գործունեության որևէ այլ ոլորտում արհեստական մենաշնորհների կամ գերիշխող դիրքերի ձևավորումն ու գոյությունը.
- ***հաստատում է***, որ շուկաների աղավաղման ցանկացած փորձ, այդ թվում՝ ապրանքների ներմուծման կամ հետագա շրջանառության սահմանափակման ուղղված ցանկացած գործողություն (ինչպես պետական մարմինների, այնպես էլ տնտեսավարող առանձին սուբյեկտների կողմից) հայտնվելու է կառավարության ուշադրության կենտրոնում՝ դրանց կանխարգելմանն ու բացառմանն ուղղված անհապաղ գործողություններ ձեռնարկելու նպատակով.
- ***հայտնում է,*** որ այդ նպատակով ՀՀ կառավարությունում գործում է **թեժ գիծ,** և կոչ է անում տնտեսավարող սուբյեկտներին ու քաղաքացիներին՝ շուկաների աղավաղման ցանկացած փորձի (այդ թվում՝ ապրանքների ներմուծման կամ հետագա շրջանառության սահմանափակման ուղղված ցանկացած գործողության) վերաբերյալ տվյալներ ունենալու դեպքում այդ մասին անմիջապես հայտնել նշված թեժ գծով:

ԹԵԺ ԳԻԾ - 010 56 23 52

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԿԱՐԱԳ

Հայաստանի Հանրապետություն երրորդ երկրներից ներմուծման ժամանակ

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ	Ապրանքի անվանումը	Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ /նախատեսված 2016թ համար/	ԱԱՀ	*Ակցիզային հարկ*
0405 10 110 0	---- սերուցքային կարագ, 85% զանգվածային բաժնից ոչ ավելի ճարպի պարունակությամբ, բնական սերուցքային կարագ, առաջնային փաթեթվածքներում, 1 կգ-ից ոչ ավելի զուտ զանգվածով	**10%**	***20%***	**-**
0405 10 190 0	---- այլ	**10%**		
0405 10 900 0	-- այլ	**15%**, բայց ոչ պակաս քան 0,16 եվրո 1 կգ համար		

Ծանուցում [1] *Երրորդ երկրներից անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքների ներմուծման դեպքում՝ ապրանքը արտադրող, վերամշակող, և/կամ պահպանող կազմակերպությունը պետք է գրանցված լինի Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական տարածք ներմուծվող՝ հսկման ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրում* :

Ծանուցում [2] *Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքին և «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրին համապատասխան:*

Ցամաքային ճանապարհով կարագի ներմուծում «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» գործընթացի մանրամասն նկարագրություն

Փուլ I. ՀՀ տարածք մուտքի մաքսային մարմնից մինչև ժամանակավոր պահպանման վայր

Քայլ 1. Փաստաթղթերը ներկայացրեք մաքսային մարմիններին

ՀՀ տարածք ապրանքների ժամանման պահին փոխադրողը[1] մաքսային մարմիններին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցով միջազգային փոխադրում իրականացնելիս ներկայացվում են

1. հետևյալ փաստաթղթերը՝

- միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վերաբերյալ փաստաթղթեր (օրինակ՝ տեխնիկական հաշվառման փաստաթուղթ),
- տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր[2] (օրինակ՝ CMR),
- փոխադրվող ապրանքների վերաբերյալ փոխադրողի մոտ առկա առևտրային փաստաթղթեր (օրինակ՝ Invoice, պայմանագիր, հաշիվ ապրանքագիր և այլն).

2. հետևյալ տեղեկությունները՝

- միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի պետական գրանցման մասին,
- ապրանքներ փոխադրողի անվանումը և հասցեն,
- ապրանքներն ուղարկող երկրի և նշանակման երկրի անվանումը,
- ապրանքներն ուղարկողի ու ստացողի անվանումն ու հասցեն,
- ապրանքները վաճառողի և ստացողի մասին՝ փոխադրողի մոտ առկա առևտրային փաստաթղթերին համապատասխան,
- բեռնատեղիների քանակի, դրանց նշագրումների և ապրանքների փաթեթվածքների տեսակների մասին,
- ապրանքների անվանումը, ինչպես նաև դրանց ծածկագրերը՝ նվազագույնը առաջին չորս նիշերով՝ Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգին կամ Արտաքին առևտրային գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան,
- ապրանքների համաքաշը (արտահայտված կիլոգրամներով) կամ ապրանքների ծավալը (արտահայտված խորանարդ մետրերով), բացառությամբ խոշոր բեռների,
- այնպիսի ապրանքների առկայության մասին, որոնց ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք արգելված կամ սահմանափակված է,
- միջազգային ապրանքատրանսպորտային բեռնագրի կազմման վայրի ու ամսաթվի մասին.

---

[1] ապրանքները փաստացի տեղափոխող կամ տրանսպորտային միջոցի օգտագործման համար պատասխանատու անձը

[2] բեռնագիր կամ ապրանքների փոխադրման այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա կատարվում են միջազգային փոխադրումներ

❗ Փաստաթղթերը և տեղեկությունները ներմուծման վայրում փոխադրողի անունից կարող է ներկայացնել փոխադրողի լիազորած անձը:

❗ Փոխադրողի անունից փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև մաքսային ներկայացուցիչների կամ փոխադրողի հանձնարարությամբ գործող այլ անձանց կողմից (օրինակ վարորդ):

(հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 158, 159 հոդվածներ, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք 149 հոդված)

Քայլ. 2. Կազմակերպեք բեռնատարի կշռումն ու ռենտգեն զննումը

Ավտոմոբիլային տրանսպորտը սահմանային մաքսային կետ մուտք գործելուց կշռվում և զննվում է տեխնիկական զննման (ռենտգենային) սարքավորման (ռապիսկան) միջոցով:

Կշռումից հետո բեռն ուղեկցող փաստաթղթերին կցվում է նաև կշռման կտրոնը:

Քայլ 3. Վճարեք ճանապարհային և բնապահպանական վճարները, եթե բեռնափոխադրող ավտոմեքենան գրանցված չէ ՀՀ-ում

Վճարում

Բեռնափոխադրող ավտոմեքենաների համար նախատեսված են հետևյալ ճանապարհային վճարի տեսակները՝

ա) ՀՀ-ում չգրանցված տրանսպորտային միջոցներով Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը (տվյալ վճարը չի տարածվում Ռուսաստանի Դաշնությունում և Վրաստանում գրանցված փոխադրողների նկատմամբ).

բ) ՀՀ-ում չգրանցված ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը.

գ) մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը.

❗ բ) և գ) կետերով նշված ավտոմեքենաների համար նախատեսված են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից տրվող թույլտվություններ, որոնք պետք է ստացվեն նախապես՝ համաձայն ՀՀ կառավարության 20.07.2006 թվականի N 1106-Ն կարգի: ***(Հիմք՝ «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենք, «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև տրանսպորտային ոլորտում համագործակցության սկզբունքների և փոխհարաբերությունների պայմանների մասին» Համաձայնագիր)***

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից Հայաստանի Հանրապետության օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության տարածք դրանց մուտք գործելու պահին՝ վճարումը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով համապատասխան

մաքսային մարմին (տվյալ վճարը չի տարածվում Վրաստանի Հանրապետությունում գրանցված փոխադրողների նկատմամբ):
(Հիմք՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք)

Ի՞նչպես վճարել. ՀՀ-ում չգրանցված տրանսպորտային միջոցներով փոխադրողը բնապահպանական և ճանապարհային վճարներ կատարելու նպատակով այցելում է անցման կետի մոտակայքում տեղակայված բանկի մասնաճյուղ իրականացնում վճարումները՝ վճարումը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով համապատասխան մաքսային մարմին: [3]

Քայլ 4. Կազմակերպեք սննդամթերքի անվտանգության զննումը



ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (ՍԱՊԾ) սահմանային հսկիչ կետի տեսուչը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը բեռի համապատասխանությունը պարզելու նպատակով սահմանային կետում իրականացնում է ներմուծվող սննդամթերքի փաստաթղթային և ֆիզիկական զննում:
ՍԱՊԾ հսկիչ սահմանային կետ ներկայացվում է.

- արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված՝ բեռի տվյալ խմբաքանակի անվտանգությունը հավաստող հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը՝ ***անասնաբուժական սերտիֆիկատ, առողջության սերտիֆիկատ:***

Ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի զննման և ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար տնտեսավարող սուբյեկտից գանձվում է վճար՝
1) կես տոննայից մինչև մեկ տոննա քաշի համար՝ **1000 դրամ**.
2) մեկ տոննան գերազանցող քաշի դեպքում՝ լրացուցիչ յուրաքանչյուր տոննայի համար **300 դրամ**.
3) Մինչև կես տոննա քաշի համար վճար չի գանձվում:
(Հիմք՝ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքՀՕ 143-Ն, հոդված 15)

1) 0.5տ – 1տ **1000 ՀՀ դրամ**
2) 1-N տ 1000+(N-1)*300 ՀՀ դրամ,
օրինակ 5 տ դեպքում
1000+4*300=2200 ՀՀ դրամ
3) 0 – 0.5տ **Անվճար**

[3] Բնապահպանական և ճանապարհային վճարների անհրաժեշտությունն առաջանում է ՍԱՊԾ կողմից բեռի մուտքը թույլատրելու պարագայում:

Ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի զննման և ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար գանձման ենթակա գումարը տնտեսավարող սուբյեկտը կամ նրա ներկայացուցիչը փոխանցում կամ վճարում է **ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հատուկ հաշվին**, ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի զննման և ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման գործողությունների ավարտից հետո՝ **երեք բանկային օրվա ընթացքում:**

! Եթե անհրաժեշտություն է առաջանում **նմուշառմամբ և լաբորատոր փորձաքննությամբ** որոշելու բեռի անվտանգությունը, ապա հսկիչ կետում բեռը կապարակնքվում է, կազմվում է ներմուծվող բեռի տնօրինումն արգելելու մասին կարգադրագիր, և թույլատրվում է բեռի մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք:

Նմուշառումը կատարվում է մաքսային հսկողության ներքո՝ մաքսային մարմինների կողմից թույլատրված և բեռը տեղափոխող անձի կողմից խնդրարկված վայրում:

Տնօրինումն արգելված կամ փաստաթղթային և ֆիզիկական զննմամբ բեռը բաց է թողնվում բեռի նկատմամբ պետական վերահսկողության արդյունքների հիման վրա: Անհամապատասխանությունների բացակայության դեպքում ՍԱՊԾ սահմանային հսկիչ կետի տեսուչը իրականացնում է արտահանող երկրի անասնաբուժական սերտիֆիկատի կամ առողջության սերտիֆիկատի վերաձևակերպում՝ **մեկօրյա ժամկետում:**

! ՍԱՊԾ կողմից բեռի ներմուծումը կարող է արգելվել բացառապես 2010 թվականի հոկտեմբերի 21-ի ՀՀ կառավարության N 1442-Ն որոշման հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում (օրինակ՝ արտահանող երկրում անասնահամաճարակային անկայուն իրավիճակի կամ կարանտինային հիվանդությունների բռնկման մասին առկա է համապատասխան պաշտոնական տեղեկատվություն, և կան արտահանման սահմանափակումներ, բացակայում են նախատեսված բեռն ուղեկցող փաստաթղթերը կամ լիազոր մարմնի կողմից կատարված նմուշառման և լաբորատոր հետազոտության արդյունքներով բեռը ճանաչվել է վտանգավոր):

(Հիմք՝ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 15, 2010 թվականի հոկտեմբերի 21-ի ՀՀ կառավարության որոշում N 1442-Ն)

Քայլ 5. Վճարեք սննդամթերքի անվտանգության զննման համար

Ի՞նչպես վճարել: Փոխադրողը ՍԱՊԾ մասով վճարներ կատարելու նպատակով՝

- այցելում է անցման կետի մոտակայքում տեղակայված բանկի մասնաճյուղ,
- իրականացնում վճարումները;
- վճարումը հաստատող փաստաթուղթը ներկայացնում է ՍԱՊԾ՝ ուղեկցող փաստաթղթերը հաստատելու համար:

ՍԱՊԾ սահմանային հսկիչ կետի տեսուչի կողմից հաստատված ուղեկցող փաստաթղթերը ստանալուց հետո **փոխադրողը վերադառնում է մաքսային կետ և ներկայացնում է վերը նշված բոլոր հաստատված փաստաթղթերը:**

Ներկայացված փաստաթղթերի հիման վրա մաքսային մարմինների կողմից կազմվում է փոխադրման ամփոփագիր և ամբողջ փաթեթը վերադարձվում է փոխադրողին:

(Փոխադրման ամփոփագրի ձևը և լրացման կարգը սահմանված է ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 01.03.2006թ.-ի N06/20-Ն հրամանով):

Փոխադրողը ուղևորվում է ներքին տարանցման փաստաթղթում նշված նշանակման վայր:

! Նշանակման վայրի ընտրությունը կատարում է տնտեսավարողը նախօրոք՝ նշում կատարելով փոխադրման փաստաթղթերում կամ նախօրոք համապատասխան խնդրանքով դիմելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին:

ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար մաքսային մարմինը, անկախ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված ապրանքների նշանակման վայրերից, կարող է սահմանել նշանակման այլ վայրեր հետևյալ դեպքերում.

1) եթե մաքսային հայտարարագրումը իրականացնում է մասնագիտացված մաքսային մարմինը.

2) եթե նշանակման վայրի մաքսային մարմնի գործունեության գոտում առկա է արտակարգ իրավիճակ, կամ որոշակի ապրանքատեսակների ներմուծման համար օրենքով գործում են արգելքներ:

(Հիմք՝ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենք, հոդված 184)

Քայլ 6. Ապրանքը հանձնեք ժամանակավոր պահպանության

Նշանակման վայր մուտք գործելուց տրանսպորտային միջոցը նորից կշռվում է, որից հետո մաքսային մարմինը իրականացնում է բեռնատարի արտաքին զննում համոզվելու, որ բեռը հասանելի չի եղել և կապարակնիքները վնասված չեն:

Ապրանքները ժամանակավոր պահպանության հանձնելու համար փոխադրողը, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձինք կամ նրանց ներկայացուցիչները մաքսային մարմին են ներկայացնում **տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, առևտրային և (կամ) մաքսային փաստաթղթեր**, որոնք պարունակում են ապրանքների, ապրանքներն ուղարկողի (ստացողի), ուղարկող (նշանակման) երկրի մասին տեղեկություններ:

Մաքսային մարմինը ապրանքները ժամանակավոր պահպանության հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը գրանցում է այդ փաստաթղթերը մաքսային մարմին հանձնելուց հետո առավելագույնը **1 (մեկ) ժամվա ընթացքում** և վերը նշված անձին տրամադրում է փաստաթղթերի գրանցումը հաստատող

փաստաթուղթ:
(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 169-րդ հոդված)

Փուլ II. Մաքսային պահեստ մուտքից մինչև հայտարարագրի ներկայացումը

Քայլ 7. Ապահովեք սննդամթերքի նմուշառումն ու փորձաքննության իրականացումը

Եթե սահմանային անցման կետում ՍԱՊԾ կողմից տրվել էր բեռի տնօրինումն արգելելու մասին կարգադրագիր ապա ժամանակավոր պահպանության մաքսային պահեստում մաքսային հսկողության ներքո ՍԱՊԾ կողմից կատարվում է բեռի զննում կամ նմուշառում:

! Ապրանքը տնօրինողի ցանկությամբ՝ ՍԱՊԾ կողմից վերցվում է նաև պահեստային նմուշ, որը ծածկագրված, կապարակնքված կամ դրոշմակնքված հանձնվում է ապրանքը տնօրինողին:

ՍԱՊԾ տեսուչը փորձարկման (փորձաքննության) նպատակով ընտրված նմուշները ներկայացնում է փորձարկման լաբորատորիա:

Լաբորատոր փորձաքննության իրականացման տևողությունը չի կարող գերազանցել **10 աշխատանքային օրը**: Լաբորատոր փորձաքննության արդյունքում անհամապատասխանություններ չհայտնաբերվելու դեպքում ՍԱՊԾ սահմանային հսկիչ կետի տեսուչը իրականացնում է արտահանող երկրի անասնաբուժական սերտիֆիկատի կամ առողջության սերտիֆիկատի վերաձևակերպում՝ **1 օրյա ժամկետում:**
(Հիմք՝ ՀՀ կառավարության 16 հոկտեմբերի 2014 թվականի N 1142-Ն որոշում)

! Բեռի զննումը ներառում է ՍԱՊԾ սահմանային հսկիչ կետի տեսուչի կողմից բեռի ստուգազննումը, ներկայացված փաստաթղթերի տվյալներին վերահսկվող ապրանքների համապատասխանության ստուգումը ուղեկցող փաստաթղթերում չնշված վերահսկվող ապրանքների առկայության և անհամատեղելի ապրանքների համատեղ տեղափոխման բացառման նպատակով, վերահսկվող ապրանքների փոխադրման համար հաստատված անասնաբուժասանիտարական պահանջներին տրանսպորտային միջոցների համապատասխանության որոշումը, տեղափոխման (փոխադրման) պայմանների և ռեժիմի համապատասխանության որոշումը, փաթեթավորման և մակնշման հաստատված պահանջներին համապատասխանության որոշումը:
(Հիմք՝ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, N2 հավելված, 22-րդ կետ)

Քայլ 8. Համապատասխանության գնահատում

Համապատասխանության գնահատման նպատակով՝ կարագի համապատասխանության հայտարարագրման ժամանակ հայտատու կարող է լինել ԵԱՏՄ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան իր տարածքում գրանցված այն իրավաբանական անձը կամ ֆիզիկական անձը, որը կամ արտադրող է, կամ արտադրողի կողմից լիազորված ներկայացուցիչ, կամ ներմուծող:

Կարագի համապատասխանության գնահատման արդյունքում տրվում են հետևյալ փաստաթղթերը.

- համապատասխանության հայտարարագիր,
- արտադրանքի նոր տեսակի՝ գրանցման /պետական/ վկայական,

Համապատասխանության հայտարարագրի ընդունում և գրանցում.

Գրանցումն իրականացվում է ԵԱՏՄ համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրի ազգային մասում, որը վարում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության **«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը**: Վերջինիս տեղեկատվությունը տրամադրվում է իր հավատարմագրման ոլորտում կարագ արտադրատեսակ ունեցող սերտիֆիկացման մարմնի կողմից:

Լաբորատոր փորձաքննությունների տևողության և արժեքի վերաբերյալ տեղեկատվություն

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Ցուցանիշի արժեքը սահմանող նորմատիվ փաստաթղթի համարը	Լաբորատոր փորձաքննության ամբողջական արժեքը	Լաբորատոր փորձաքննության միջին արժեքը, ՀՀ դրամ	Լաբորատոր փորձ. ժամկետը համաձայն ՀՀ կառավարության 2014 թ. N 1142-Ն որոշման	Լաբ. Փորձ. փաստացի տևողությունը	Անվտանգության ցուցանիշների քանակը
1	Կարագ	ՄՄՏԿ 033/2013 և ՄՄՏԿ 021/2011	137800	80000-100000	Մինչև 10 աշխ. օր	5 աշխ. օր	20

Հայտարարատուն կարող է իրականացնել բեռի նախնական զննում ապագայում ճիշտ հայտարարագրելու նկատառումից ելնելով:

Հայտարարատուն փաստաթղթերով գնում է նշանակված մաքսատուն՝ մաքսային ձևակերպում իրականացնելու նպատակով:

Փուլ III. Հայտարարագրումից մինչև բաց թողնում

Քայլ. 9. Ներկայացրեք հայտարարագիրը

Հայտարարատուի կողմից մաքսատանը ներկայացվում են.

- Մաքսային հայտարարագիր
- Արտաքին տնտեսական գործարքի իրականացումը հաստատող փաստաթուղթ, իսկ արտաքին տնտեսական գործարքի բացակայության դեպքում՝ այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքը (օրինակ Invoice (հաշիվ ապրանքագիր), պայմանագիր, փոխադրման հետ կապված ծախսերը հավաստող փաստաթուղթ և այլն)
- Տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը (օրինակ CMR)
- Արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բեռի տվյալ խմբաքանակի անվտանգությունը հավաստող հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը՝ **անասնաբուժական կամ առողջության կամ սանիտարական սերտիֆիկատներ կամ անասնաբուժական վկայականներ**
- Գրանցված համապատասխանության հայտարարագիր[4]
- Պայմանագիր մաքսային ներկայացուցչի հետ (եթե հայտարարագրումն իրականացվում է ներկայացուցչի միջոցով)
- Հարկերը, տուրքերը, պարտադիր այլ վճարումները հավաստող փաստաթղթերը, որոնք պետք է նախապես հավաստված լինեն մաքսատան ֆինանսական վարչության (գանձապահի) կողմից:

(Հիմք՝ ՀՀ կառավարության 21 նոյեմբերի 2003 թվականի N 1779-Ն որոշում)

Բացի վերը նշված փաստաթղթերից՝ անհրաժեշտության դեպքում ներկայացվում են նաև մաքսային միության մաքսային օրենսգրքի 183-րդ հոդվածով սահմանված փաստաթղթեր:

! Որպես Հայտարարատու, ի թիվս այլոց, կարող է հանդես գալ Մաքսային միության անդամ պետության անձը (առանց մաքսային ներակայացուցչի),

- որը կնքել է արտաքին տնտեսական գործարք կամ որի անունից (հանձնարարությամբ) կնքվել է այդ գործարքը.

---

[4] Գրանցված համապատասխանության հայտարարագրում պետք է նշված լինի, որ ներմուծվող արտադրանքը պետք է համապատասխանի Մաքսային Միության հետևյալ տեխնիկական կանոնակարգերին՝
«Կաթի և կաթնամթերքի մասին անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 033/2013 /Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի № 67 որոշում/
«Սննդամթերքի մակնշման մասին» ՄՄ ՏԿ 022/2011 /Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 881 որոշում/
«Փաթեթվածքի անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 005/2011 / Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 769 որոշում/
«Սննդամթերքի անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 021/2011 /Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 880 որոշում/:

▪ ունի ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունք՝ արտաքին տնտեսական գործարքի բացակայության պարագայում.
(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք, հոդված 186)

Վճարված է

Մաքսային վճարների (ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, մաքսատուրքի (ինչպես նաև դրանց փոխարինող հաստատագրված վճարների) և բնապահպանական վճարի) գումարների վճարումը հավաստվում է՝

1) հայտարարատուի կողմից մաքսային մարմիններին ներկայացվող թղթային վճարման հանձնարարականի օրինակի ներկայացմամբ, որը պարունակում է բանկի կողմից վճարումը կատարված լինելու մասին նշում, **կամ**

2) մաքսային մարմինների կողմից շահագործվող հայտարարագրման ավտոմատացված համակարգին առևտրային բանկերի կողմից ուղարկված՝ մաքսային վճարները կատարված լինելու մասին նշումով էլեկտրոնային հաղորդագրությամբ: Անձի կողմից մաքսային վճարումները կարող են կատարվել հեռահար սպասարկման համակարգերի կամ բանկային համակարգում կիրառվող այլ վճարային գործիքներով:

(Հիմք՝ ՀՀ կառավարության 19.04.1999թ. թիվ 230 որոշում)

! Ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց պատճենները: Մաքսային մարմինն իրավունք ունի ստուգելու փաստաթղթերի ներկայացված պատճենների համապատասխանությունը դրանց բնօրինակներին: Եթե ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ նախկինում մաքսային մարմին ներկայացվել են մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթեր, բավարար է ներկայացնել այդպիսի փաստաթղթերի պատճենները կամ նշել տեղեկություններ մաքսային մարմին այդ փաստաթղթերը ներկայացնելու մասին:

(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք հոդված 183)

Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրումն իրականացնում է հայտարարատուն՝ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելով:

! Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրումն իրականացվում է ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդի, ապրանքների մաքսային արժեքի մեծության, մաքսային արժեքի որոշման հետ առնչություն ունեցող՝ արտաքին տնտեսական գործարքի հանգամանքների և պայմանների վերաբերյալ տեղեկությունների հայտարարագրման, ինչպես նաև դրանք հիմնավորող փաստաթղթերի ներկայացման միջոցով:

Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգը հաստատված է ***Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ***, որտեղ ներառված է նաև.

1. հայտարարագրված մաքսային արժեքը հաստատող փաստաթղթերի ցանկը (Հավելված 1-

ում նշվում են անհրաժեշտ փաստաթղթերը ըստ մաքսային արժեքի որոշման մեթոդի)

2. ինչպես նաև լրացուցիչ ստուգման անցկացման ժամանակ լրացուցիչ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, որոնք կարող են պահանջվել մաքսային մարմնի կողմից (Հավելված 3):

! Ապրանքների մաքսային արժեքի հսկողության իրականացման արդյունքներով մաքսային մարմինն ընդունում է որոշում ապրանքների հայտարարագրված մաքսային արժեքի ընդունման վերաբերյալ կամ որոշում՝ ապրանքների հայտագրված մաքսային արժեքի ճշգրտման վերաբերյալ:

Ապրանքների հայտագրված մաքսային արժեքի ճշգրտման մասին մաքսային մարմնի կողմից կայացված որոշման մեջ պետք է նշվի հիմնավորումը և դրա կատարման ժամկետը:

Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման վերաբերյալ մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների բաց թողնումը որոշում կայացվելու դեպքում հայտարարատուն պարտավոր է կատարել ոչ հավաստի տվյալների ճշգրտում և վճարել մաքսատուրքերը, հարկերը՝ ճշգրտված տվյալների հաշվառմամբ հաշվարկված չափով, ոչ ուշ, քան մաքսային հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե հայտարարատուն ապրանքների բաց թողնման ժամկետները չգերազանցող ժամկետում չի իրականացնում ոչ հավաստի տեղեկությունների ճշգրտում և չի վճարում վրաեկ մաքսատուրքերը, մաքսային մարմինը մերժում է ապրանքների բաց թողնումը:

(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք հոդվածներ 67 և 68)

Մաքսային մարմինն իրականացնում է մաքսային հայտարարագրի գրանցում կամ մերժում է դրա գրանցումը մաքսային հայտարարագիրը ներկայացնելու պահից առավելագույնը **2 (երկու) ժամվա** ընթացքում:

Հիմնավորում

Մաքսային մարմինը մերժում է ներկայացված հայտարարագրի գրանցումը Միության մաքսային օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Մաքսային հայտարարագրի գրանցման մերժումը գրավոր ձևակերպվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ **նշելով մերժման պատճառը**:

Մաքսային հայտարարագրի գրանցումը մերժելու դեպքում մաքսային հայտարարագիրը և ներկայացված փաստաթղթերը վերադարձվում են հայտարարատուին կամ մաքսային ներկայացուցչին:

Հայտարարագրի գրանցումից հետո ռիսկերի կառավարման համակարգի միջոցով իրականացվում է մաքսային հսկողության ուղու ընտրություն:

(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք հոդված 190)

Փուլ IV Ապրանքների բաց թողնումը

Քայլ 10. Կազմակերպեք ապրանքի բաց թողնումը

Մաքսային ձևակերպումների համար նախատեսված ավտոմատացված համակարգչային ծրագրի միջոցով ապրանքների փաստաթղթային ստուգումը և զննումն իրականացնելու համար ընտրվում է մաքսային հսկողության իրականացման ընթացակարգերից որևէ մեկը՝

- ա) «Կանաչ ուղի» ապրանքների և տրանսպորտային միջոցների բաց թողնում՝ **առանց փաստաթղթային ստուգման և զննման.**
- բ) «Դեղին ուղի» ապրանքների և տրանսպորտային միջոցների բաց թողնում՝ **փաստաթղթային ստուգմամբ.**
- գ) «Կարմիր ուղի» ապրանքների և տրանսպորտային միջոցների բաց թողնում՝ **փաստաթղթային ստուգմամբ և զննմամբ:**

Ապրանքների ըստ ուղիների բաց թողնման և զննման մանրամասն նկարագրությունը հաստատված է՝ **ՀՀ կառավարության 24 մարտի 2001 թվականի N 236 որոշմամբ:**

Ապրանքների բաց թողնման գործընթացը պետք է մաքսային մարմնի կողմից ավարտվի ոչ ուշ, քան մաքսային հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող **1 (մեկ) աշխատանքային** օրվա ընթացքում:

Ապրանքների բաց թողնման ժամկետները կարող են երկարաձգվել մաքսային հսկողության անցկացման կամ այդ գործընթացի ավարտման համար անհրաժեշտ ժամանակով՝ մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված մաքսային մարմնի ղեկավարի (պետի) տեղակալի կամ նրա պաշտոնակատարի գրավոր թույլտվությամբ: Այդ երկարաձգված ժամկետը չի կարող գերազանցել մաքսային հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող **10 (տասը) աշխատանքային օրը**:

(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 196-րդ հոդված)

Բողոքարկում. Մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից որոշումների ընդունման, գործողությունների և անգործության բողոքարկումն իրականացվում է Միության մաքսային օրենսդրության և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: